

**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀՈՒՇԱԳԻՐ**

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ) «Ա.Բ. Նալբանդյանի անվան Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ ք. գ. թ. Սեյրան Մինասյանի, ով գործում է ինստիտուտի Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԳՊՀ), ի դեմս ռեկտոր՝ ֆիզ. մաթ. գ. դ., պրոֆեսոր Արտուշ Ղուկասյանի, ով գործում է ԳՊՀ-ի Կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության ապահովման, կողմերի գիտահետազոտական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր գիտական փորձի ներդրման անհրաժեշտությունը ուսումնական գործընթացում, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանումն է:

2. Հուշագրի նպատակը և համագործակցության հիմնական ուղղությունները

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև գիտահետազոտական և գիտակրթական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրերի իրականացումը Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

ա/ ՀՀ ԳԱԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում և ԳՊՀ-ում համատեղ գիտական և կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների քննարկում և կազմակերպում,

բ/ համատեղ հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում,

գ/ համատեղ գիտահետազոտական, կրթական ուղղվածության դրամաշնորհային ծրագրերի իրականացում, հետազոտությունների արդյունքների հրատարակում.

- մյուս Կողմին արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում որպես գործընկեր ներգրավում,
- Կողմերի կազմակերպած կրթական, գիտական, մշակութային ծրագրերին և այլ միջոցառումներին մասնակցություն,

դ/ գիտական և գիտակրթական ծրագրերի արտաքին փորձագիտական գնահատման աշխատանքների իրականացում,

ե/ սովորողների և դասախոսների մասնագիտական վերապատրաստումների, վարպետության դասերի, կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպում,
զ/ մասնագիտական կրթական ծրագրերի և/կամ առանձին դասընթացների համատեղ մշակում՝ սովորողների համար հնարավորություններ ստեղծելով կրթություն ստանալու նաև հեռաուսուցման միջոցով, պրակտիկաների համատեղ կազմակերպում և ղեկավարում,

է/ ինստիտուտի մասնագետների ներգրավում ԳՊՀ-ում իրականացվող ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարման, գրախոսման, պաշտպանության աշխատանքներին,

ը/ գիտակրթական և մեթոդական գրականության ու մասնագիտական զարգացմանը նպաստող էլեկտրոնային աղբյուրների փոխադարձ տրամադրում, գիտական աշխատությունների, դասագրքերի, ուսումնական նյութերի, ուսումնամեթոդական ձեռնարկների համատեղ մշակում և խմբագրում,

թ/ համատեղ գիտական ներուժով՝ ինստիտուտի փորձարարական սարքերի և սարքավորումների օգտագործմամբ, գիտական մշակումների կատարում և արդյունքների ներդրում:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Կողմերն իրավունք ունեն հանդես գալու Հուշագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու անցկացման նախաձեռնողի դերում:

3.2. Համագործակցության նպատակով, Հուշագրի հիման վրա, Կողմերը պարտավորվում են.

ա/ միմյանց փոխանցել համապատասխան տեղեկատվություն, որը վերաբերում է Հուշագրով նախատեսված համատեղ ծրագրերի ու միջոցառումների անցկացմանը,

բ/ տրամադրել խորհրդատվություն ծրագրերի ու այլ միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցերում,

գ/ ապահովել անհրաժեշտ նյութական բազա և պայմաններ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու և միջոցառումներ անցկացնելու համար,

դ/ տեղյակ պահել միմյանց համագործակցության ընթացքում առաջացող խնդիրների մասին և համատեղ ուժերով ապահովել դրանց լուծումը:

4. Հուշագիրն ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները

4.1. Հուշագիրը բաղկացած է 3 էջից և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

4.2. Հուշագիրը կնքվում է 5 տարի ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո, եթե որևէ Կողմից այլ առարկություն չի լինում, ապա Հուշագրի գործունեության ժամկետն ինքնըստինքյան շարունակվում է ևս 5 տարի:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Հուշագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

5.2. Կողմերից մեկի նախաձեռնությամբ Հուշագրի դադարեցման անհրաժեշտության դեպքում մյուս Կողմը պետք է տեղեկանա այդ մասին գրավոր՝ ենթադրյալ լուծման պահից առնվազն 10 օր առաջ:

6. Կողմերի իրավաբանական հասցեները

ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվան
Քիմիական ֆիզիկայի
Ինստիտուտ ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Պ. Սևակի փող., 5/2,
Ինտերնետային կայք՝ chph.sci.am
Հեռ.՝ +(37460)623594

Գորիսի պետական համալսարան
ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Գորիս, Ավանգարդ 4
Էլ. Փոստ՝ gorissu@mail.ru
Հեռ.՝ +374 028422767

Տնօրեն՝ Սեյրան Մինասյան

Ռեկտոր՝ Արտուշ Դուկասյան





Կ.Տ.

« 02 »



2020թ